

**Գավառի պետական համալսարանի
գիտական խորհրդի 2014 թ. նիստերի
արձանագրություններ**

Արձանագրություն 1

2014 թ. հունվարի 16-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի անդրանիկ նիստը՝ նախագահությամբ Ռ. Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ. Ասոյանի:

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 35 անդամներից 28-ը:

Օրակարգ՝

1.ԳՊՀ տարեկան գործունեության և 2013 թ.հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը և զարգացման հիմնական ուղղությունները:

/ զեկ՝ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան /

2.ԳՊՀ ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունների և ցուցաբերվող աջակցության արդյունավետության գնահատման հիմնահարցերը:

/ զեկ՝ ԲՖ դեկան Թ.Ա.Ասոյան /

3.ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետության գնահատման կառուցակարգերն ու մեթոդները:

/ զեկ՝ ՀՄՖ փոխդեկան Գ.Վ.Գևորգյան

4.ԳՊՀ տեխնիկական շահագործման բաժնի վերակազմակերպման և տեղեկա-տվական տեխնոլոգիաների բաժնի ստեղծման մասին:

/ զեկ՝ պրոռեկտոր Ա.Հ. Ապրոյան /

5.ԳՊՀ-ի ԱՔՎ որակի ապահովման բաժնում միջազգային ծրագրերի գծով մաս-նագետի հաստիք ավելացնելու մասին:

/ զեկ՝ ռեկտոր Ռ.Խ.Հակոբյան /

6.Ընթացիկ հարցեր:

Բացելով նիստը՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը ներկայացրեց ԳՊՀ 2013 թ. գործունեության և հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը: Նշվեց, որ 2013 թ. հոբելյանական է եղել Գավառի պետական համալսարանի համար. լրացավ համալսարանի հիմնադրման 20-ամյակը և հիմնադիր ռեկտոր Հրանտ Հակոբյանի ծննդյան 85-ամյակը: Կազմակերպվել են միջոցառումներ՝ նվիրված նշված տարելիցներին: Այնուհետև անդրադարձ կատարվեց ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների կատարած կոնկրետ աշխատանքներին: Պարբերաբար վերանայվել և թարմացվել են ԳՊՀ-ում իրականացվող մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը, պրոֆեսորադասախոսական անձնակազմը համալրվել է նոր անդամներով, կազմակերպվել են սեմինարներ՝ նվիրված ուսանողակենտրոն ուսուցման մեթոդների ու տեխնոլոգիաների լուսաբանմանը: Ուսանողների առաջադիմության հարցերին անդրադառնալիս կարևորվեցին <<Examination. GSU>> և <<E-Learning. GSU>> համակարգերի ներդրումը ուսումնական գործընթացում: Բարձր գնահատվեց բարերարների և տարբեր հիմնադրամների ցուցաբերած նյութական ու բարոյական աջակցությունը սոցիալապես անապահով ուսանողներին:

Կարևոր հանգամանք է համալսարանի համագործակցությունը և անդամակցումը Եվրամիության շուրջ տասնհինգ ծրագրերի: Բուհում ակտիվորեն գործում են ուսանողական ինքնակառավարման մարմինները, իրականացվում են համագործակցության ծրագրեր ավագ դպրոցների և քոլեջների հետ, կնքվում են համապատասխան հուշագրեր: Միշտ էլ կարևորվել են բուհի նկատմամբ հանրային վստահության հարցերը: Այս առումով կարևոր դեր է խաղում ԳՊՀ հակակոռուպցիոն ռազմավարական ծրագիրը, որի իրականացման ուղղությամբ կատարված աշխատանքների փորձը ներկայացվել է <<Բարձրագույն կրթության փոփոխությունների նախաձեռնում և կառավարում>> ծրագրին անդամակցող քսանինը բուհի: Այս առումով կարևոր փաստաթուղթ է <<ԳՊՀ ակադեմիական ազնվության հայեցակարգը>>: ԳՊՀ զարգացման հայեցակարգում մի շարք կարևոր հարցերի հետ նշվեցին հանրակացարանի հիմնանորոգման, դասախոսների սոցիալական խնդիրների լուծման, գրադարանների և ընթերցասրահի արդիականացման խնդիրները:

Բանասիրական ֆակուլտետի դեկան Թ. Ասոյանի զեկուցումը նվիրված էր այն կառուցակարգերին, որոնք վերաբերում են ԳՊՀ ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունների և ցուցաբերվող

աջակցության արդյունավետության գնահատման հիմնահարցերին: Զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ ինքնավերլուծության ձևաչափով առաջադրված խորհրդատվական ծառայությունների համար մշակված չափանիշներին և չափորոշիչներին, մասնավորապես համալսարանում ուսանողներին ցուցաբերվող աջակցության և խորհրդատվության արդյունավետության բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքներին, այդ ոլորտում եղած բացթողումներին: Վերլուծությունները կատարվեցին այլ բուհերի նմանատիպ ծառայությունների համեմատությամբ և բարձրագույն կրթության վերաբերյալ ընդունված ՀՀ օրենքների հաշվառմամբ: Թ. Ասոյանը նշեց, որ Գավառի պետական համալսարանում մշակվել, ընդունվել և գործում են մի շարք կանոնակարգեր, որոնք վերաբերում են ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայություններին և ցուցաբերվող աջակցության կառույցներին:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի փոխդեկան Գ. Գևորգյանն անդրադարձավ այն կառուցակարգերին և մեթոդներին, որոնք վերաբերում են պրոֆեսորադասախոսական անձնակազմի գործունեության գնահատմանը: Վերլուծելով համապատասխան փաստաթղթերը՝ զեկուցողը նշեց, որ Գավառի պետական համալսարանում այդ ուղղությամբ բավարար աշխատանքներ են կատարվել, սակայն դրանք պետք է շարունակական լինեն և համապատասխանեն ժամանակի պահանջներին:

ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Ա. Ապրոյանը գիտխորհրդին առաջարկություն ներկայացրեց ԳՊՀ տեխնիկական շահագործման բաժինը լուծարելու և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին ստեղծելու վերաբերյալ: Առաջարկությունը քննարկվեց և հավանության արժանացավ գիտխորհրդի կողմից:

ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը, կարևորելով միջազգային ծրագրերին համագործակցելու անհրաժեշտությունը, առաջարկեց ԱԲՎ որակի ապահովման բաժնում միջազգային ծրագրերի գծով մասնագետի հաստիք ստեղծել: Առաջարկը քննարկվեց և ընդունվեց:

ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանը ներկայացրեց <<ԳՊՀ ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցելու կարգում>> առաջարկվող փոփոխությունները, որոնք ևս քննարկվեցին և ընդունվեցին:

Հիմք ընդունելով հաշվետվությունը, զեկուցումները, ելույթներն ու առաջարկությունները՝ գիտական խորհուրդը

Որոշեց՝

- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի տարեկան հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:
- 2.ԲՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
- 3.ՀՄՖ փոխդեկան Գ. Գևորգյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:
- 4.Լուծարել ԳՊՀ տեխնիկական շահագործման բաժինը:
- 5.Ստեղծել ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին:
- 6.Ստեղծել միջազգային ծրագրերի գծով մասնագետի հաստիք:
- 7.Հաստատել տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի կանոնակարգը:
- 8.Ուժը կորցրած ճանաչել ԳՊՀ գիտական խորհրդի 2010թ. սեպտեմբերի 29-ի թիվ 6 նիստի որոշմամբ հաստատված «ԳՊՀ ուսանողների ուսման վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցելու կարգը»:
- 9.Հաստատել «ԳՊՀ ուսանողների ուսման վարձը վճարելու և վճարը ուսանողական նպաստի ձևով մասնակի փոխհատուցելու կանոնակարգը»:
- 10.Հանձնարարել ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի խորհրդին՝ ա/մշակել «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի նոր կանոնակարգի նախագիծ՝ ներառելով հետբուհական մասնագիտական կրթական ծրագրերի իրակա-նացման գործառույթներ, բ/մշակված կանոնակարգի նախագիծը ներկայացնել ԳՊՀ գիտխորհրդի քննարկմանը և հաստատմանը, գ/ ԵՄ Տեմպուսի VERITAS ծրագրի շրջանակում Զալցբուրգյան սկզբունքներին համապատասխան հետբուհական կրթության կազմակերպման համար ընտրել «Ֆինանսներ» մասնագիտական կրթական ծրագիրը, կատարել նախապատրաստական աշխատանքներ ծրագրի իրականացման համար:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտքարտուղար՝ Թ. Ասոյան

